ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 դեկտեմբերի 2014 թվական թիվ 72-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի «Աշխատանքային օրերը տեղափոխելու մասին» թիվ 1355-Ն որոշումը՝

*կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի մի շարք կարգադրություններում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2014թ. նոյեմբերի 11-ի՝ «Գագիկ Դալլաքյանին հերթական արձակուրդ տրամադրելու մասին» N 63-Ա կարգադրության 1-ին պարբերության «դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 27-ը» բառերով.

2) 2014թ. դեկտեմբերի 2-ի՝ «Նելլի Գևորգյանին հերթական արձակուրդի մնացած մասը տրամադրելու մասին» N 69-Ա կարգադրության 1-ին պարբերության «դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 24-ը» բառերով.

3) 2014թ. դեկտեմբերի 4-ի՝ «Համլետ Ավալյանին հերթական արձակուրդի մնացած օրերը տրամադրելու մասին» N 70-Ա կարգադրության 1-ին պարբերության «դեկտեմբերի 22-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 20-ը» բառերով:

4) 2014թ. դեկտեմբերի 5-ի՝ «Ասյա Մարդանյանին հերթական արձակուրդի մնացած օրերը տրամադրելու մասին» N 71-Ա կարգադրության 1-ին պարբերության «դեկտեմբերի 23-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 22-ը» բառերով:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. դեկտեմբերի 8
ք. Իջևան